կամք ժողովուրդեան իցէ եթէ կամին հաստատել նոյն արանց, զի կալով ճեասցեն կրկին փոխանորդ երիս ամաց կամ հանել պաշտօն 'ի նոցանէ և տալ այլ ոմանց ըստ համեմատութեան վերն սահմանեալ կերպին, և այս ընտրողութիւնս սկըսանի յամսեանն դեկտեմբերի և ընտրեալսն հաստատեսցի որ ընծայեսցեն նոցայ 'ի տունն հայոց առաջին աւուրն յունվարի, զի մտցեն 'ի պաշտօն սկիզբ տարուն այսինքն յունվարի 6. յայսմ Օրինօք հաւաքելով փոխանորդացս քանի ոք որ գտցի 'ի միջի յազգին հայոց մի 'ի երկուց փոխանորդաց համահաւասար ընտրեցեալ լինիցի տանուտէր տանն հայոց, և միւսն պաշտօնատար 'ի տանէն Հայոց։

Օրինակ փոխանորդութեանց երկոտասան հազար տանց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յայտնի լինի ամենեցուն, որ մեք ներքոյ ձեռնագրողք բոլոր քեօֆխայք գեղօրէից և ծերակուտօք և գաւառապետօք իշխանօք աշխարհիս վասպուրականի ըստ Օրինօք Հայոց ընտրեցաք 'ի միջէ մերմէ արս երկուս, այսինքն Տեառն մանասէ գեղջէն հեղվարդու, և Տեառն բրաբիոն 'ի գեղջէն կարփու, կամաւ և յօժարութեամբ մերով տուաք կարէղութիւն փոխանորդութեան